ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ Հ. 1

2019թ. սեպտեմբերի 20-ին տեղի ունեցավ գեղարվեստական կրթության ֆակուլտետի խորհրդի նիստը

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. 1-ին կիսամյակի աշխատանքային պլանի հաստատում
2. 2019-2020 ուստարվա առկա ուսուցման ընդունելության արդյունքները
3. 2019-2020 ուստարվա մանկավարժական և ուսումնական պրակտիկաների ընթացքի մասին
4. 2018-2019 ուս. տարվա 2-րդ կիսամյակի հեռակա ուսուցման ընթացիկ քննությունների արդյունքների ամփոփում
5. 2019-2020 ուս. տարվա մագիստրատուրայի 1-ին կուրսի ատենախոսությունների թեմաների հաստատում
6. Ընթացիկ հարցեր

Նիստին ներկա էին խորհրդի 20 անդամից 14-ը

1. Լսեցին - 2019-2020 ուստարվա 1-ին կիսամյակի աշխատանքային պլանի հաստատման հարցը

Արտահայտվեցին – ֆակուլտետի դեկան, արվեստագիտության դոկտոր Արա Հակոբյանը, ներկայացրեց կիսամյակի աշխատանքային պլանը

Որոշեցին – հաստատել 2019-2020 ուստարվա 1-ին կիսամյակի աշխատանքային պլանը։

2. Լսեցին – 2019-2020 ուստարվա առկա ուսուցման ընդունելության արդյունքները։

Արտահայտվեցին – ֆակուլտետի դեկան, արվեստագիտության դոկտոր Արա Հակոբյանը, ներկայացրեց ընդունելության արդյունքները՝ սեպտեմբերի 20-ի դրությամբ կցագրված և հրամանագրված ուսանողների թիվը կազմում է.

առկա բակալավրիատ՝ 131 ուսանող

մագիստրատուրա՝ 31 ուսանող

Որոշեցին – ընդունելության արդյունքները համարել բավարար։

3. Լսեցին – 2019-2020 ուստարվա մանկավարժական և ուսումնական պրակտիկաների ընթացքի մասին:

Արտահայտվեցին – ֆակուլտետի պրակտիկայի ղեկավարներ Մ.Ավետիսյանը և Շ.Մաթևոսյանը ներկայացրեցին այն ուսումնական կենտրոններն ու թանգարանները, որտեղ անցկացվում են պրակտիկաները, ներկայացվեցին ուսանողների և մեթոդիստների ցուցակները, վերահսկման ժամանակացույցը։

Որոշեցին – կատարված աշխատանքները համարել բավարար։

4. ԼՍԵՑԻՆ - 2018-2019 ուս. տարվա 2-րդ կիսամյակի հեռակա ուսուցման ընթացիկ քննությունների արդյունքների ամփոփում

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Գեղարվեստական կրթության ֆակուլտետի ուսումնական գծով դեկանի տեղակալ Լ.Այվազյանը ներկայացրեց 2018-2019 ուստարվա 2-րդ կիսամյակի պարտքերի մարման բնականոն ընթացքը հեռակա և առկա ուսումնական համակարգերում։

ՈՐՈՇԵՑԻՆ – Ընթացքը համարել բավարար:

5. ԼՍԵՑԻՆ – 2019-2020 ուստարվա մագիստրատուրայի 1-ին կուրսի ատենախոսությունների թեմաների հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ֆակուլտետի ամբիոնների վարիչները ներկայացրեցին 1-ին կուրսերի մագիստրատուրայի ատենախոսությունների թեմաները՝

Արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոն

Արվեստի տեսություն, պատմություն և կառավարում մասնագիտություն

1. Ռուբեն Նաքյանի գեղարվեստական ժառանգությունը
2. Սյուրռեալիզմը և Լևոն Թութունջյանը
3. Բյուզանդական արվեստի արձագանքները հայկական որմնանկարներում
4. Տպագրական գրաֆիկայի միջազգային բիենալլեն Երևանում
5. Բյուզանդական արվեստի արձագանքները հայկական որմնանկարներում
6. Սոցռեալիզմը և ամերիկյան ռեգիոնալիզմը
7. Խորհրդահայ նկարիչների ստեղծագործությունները արտասահմանյան աուկցիոններում
8. Հեղինակային իրավունքը արտ-մենեջմենթում
9. Հայ արվեստագետների անհայտ կորած աշխատանքները

10. Երվանդ Քոչարի ստեղծագործությունները Փարիզի Օրսե թանգարանում
11. Մեծանուն նկարիչների նվիրաբերած աշխատանքները Հայաստանի ազգային պատկերասրահին՝ անկախությունից հետո
12. Արվեստի ստեղծագործությունների գնահատման սկզբունքները Հայաստանում և արտերկրում
13. Հայկական որմնանկարների վերականգնումը 2017-2019 թթ. /Լմբատավանք, Կարմրավոր, Մաստարա, Դաղիվանք, Մեղրու Սուրբ Հովհաննես Մկրտիչ/

Մշակութաբանություն մասնագիտություն

1. Հռոմկլայի մշակութային ավանդը
2. Վաչուտյան իշխանների եկեղեցաշինական գործունեությունը
3. Հայկական պատմական դրոշների խորհրդանիշները
4. Ս. Դյագիլևը և հայ մտավորականները
5. Երկրորդ աշխարհամարտին մասնակցած ՀՊՄՀ Գեղարվեստական կրթության ֆակուլտետի մանկավարժ-նկարիչները
6. Խորհրդային գաղափարախոսությամբ հայկական մոնումենտալ քանդակների ճակատագիրը

Կերպարվեստի ամբիոն

1. Հուշարձանների ուսումնական դերը աշակերտի աշխարհընկալման ձևավորման գործում
2. Քաղաքային քանդակի գեղագիտական նշանակությունը դպրոցականի աշխարհընկալման գործընթացում (Երևանի օրինակով)
3. Հայկական գրաֆիկայի դերը աշակերտի գեղագիտական ճաշակի ձևավորման գործում
4. Հայ նշանավոր արվեստագետների մանկավարժական գործունեությունը ՀՊՄՀ-ի կերպարվեստի ամբիոնում
5. Կերպարվեստի ստեղծագործությունների վերատպությունների դերը և նշանակությունը հանրակրթական առարկաների դասագրքերում
6. Կոմպոզիցիայի դերը միջին և մասնագիտական հաստատությունների ստեղծագործություններում
7. Գրաֆիկայի տարրական գիտելիքների իմացության անհրաժեշտությունը ապագա կերպարվեստ առարկայի մանկավարժների համար
8. Ազգային ավանդույթների և սովորույթների արտահայտումը կերպարվեստում /միջին դպրոց/
9. Հայկական զարդանախշի կիրառման հնարավորությունները գրքի պատկերազարդման գործընթացում
10. Երևակայությունը որպես երեխայի ստեղծագործական կարողությունների զարգացման միջոց
11. Փոքրածավալ քանդակի հիմնական սկզբունքները և կատարման մեթոդները միջին մասնագիտական հաստատություններում
12. Հայրենասիրական թեմաները կերպարվեստում և նրա կարևորությունը ուսումնադաստիարակչական գործընթացում
13. Փայտի գեղարվեստական փորագրության ուսուցման մեթոդները միջին մասնագիտական հաստատություններում
14. Փայտի գեղարվեստական փորագրության առանձնահատկություններն ու մեթոդները արտադպրոցական հաստատություններում (ուսումնական պրակտիկայի օրինակով)
15. Հայկական զարդանախշը տարբեր նյութերի փորագրական աշխատանքներում:
16. Գրքի ձևավորումը դպրոցականների գեղարվեստական հետաքրքրությունների ակտիվացման միջոց
17. Փակցանկարչությունը (ապլիկացիա և կոլաժ) որպես գեղարվեստական և աշխատանքային կարողությունների զարգացման միջոց
18. Երեխայի մտավոր կարողությունների զարգացումը կերպարվեստի դասերի ընթացքում
19. Մանրաքանդակի հիմնական առանձնահատկությունները և կատարման մեթոդները միջին մասնագիտական հաստատություններում
20. Համակարգչային գրաֆիկայի ուսուցման դերը դպրոցականների ստեղծագործական ունակությունների զարգացման գործընթացում
21. Ուսանողների գեղարվեստական ունակությունների զարգացումը գեղարվեստական կրթության ֆակուլտետի համակարգչային գրաֆիկայի ուսուցման գործընթացում
22. Համակարգչային գրաֆիկայի ուսումնական նմուշօրինակի ձևավորումը միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների սովորողների համար
23. Փայտի գեղարվեստական մշակումը հայկական եկեղեցիներում
24. Հայկական զարդանախշերը հագուստի հորինվածքներում

25. Էրգոնոմիկայի դերը արդյունաբերական դիզայնում
26. Հայկական զարդամոտիվները խեցեգործական արվեստում
27. Վիշապի խորհուրդը ժամանակակից գորգագործության մեջ
28. Գոբելենի արվեստի վերածնունդը (20-րդ դար Ժան Լյուրսա)
29. Բարոկկոյի և ռոկոկոյի ժամանակաշրջանի շպալերի գոբելենի արվեստը
30. Խորհրդային շրջանի հայկական ոսկերչությունը
31. Հետխորհրդային շրջանի հայկական արծաթագործությունն ու ոսկերչությունը

Երաժշտության մանկավարժության ամբիոն

1. Սոֆա Ազնաուրյանի «Չիկարելիի արկածները» մանկական օպերան հիմնական չպրոցի 5-րդ դասարանում
2. «Բազմաձայն երգեցողության զարգացումը» մանկավարժական պրակտիկայի ընթացքում (5-7-րդ դասարաններ)
3. Էդվարդ Միրզոյանի «Մանկական ալբոմը» հիմնական դպրոցի «երաժշտություն» առարկայի դասերին
4. Աշակերտների բազմակողմ երաժշտական զարգացումը հիմնական դպրոցի 5-րդ դասարանում
5. երգչական ձայնի զարգացման առանձնահատկությունները «երաժշտություն» առարկայի դասին

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել 2019-2020 ուստարվա մագիստրատուրայի 1-ին կուրսի ատենախոսությունների թեմաները:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ՀԱԿՈԲՅԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ Հ. 2

2019թ. հոկտեմբերի 28-ին տեղի ունեցավ գեղարվեստական կրթության ֆակուլտետի խորհրդի նիստը

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. 2018-2019 ուստարվա առկա բակալավրիատի և մագիստրատուրայի 2-րդ կիսամյակի քննաշրջանի պարտքերի մարման ամփոփում
2. Մանկավարժական և ուսումնական պրակտիկաների արդյունքների ամփոփում
3. 2019-2020 ուստարվա հեռակա ուսուցման ընդունելության քննությունների արդյունքների ամփոփում
4. ընթացիկ հարցեր

Նիստին ներկա էին խորհրդի 20 անդամից 14-ը

1. Լսեցին - 2018-2019 ուստարվա առկա բակալավրիատի և մագիստրատուրայի 2-րդ կիսամյակի քննաշրջանի պարտքերի մարման ամփոփման հարցը

Արտահայտվեցին – ուսումնական գծով դեկանի տեղակալ Լ.Այվազյանը ներկայացրեց 2018-2019 ուստարվա առկա բակալավրիատի և մագիստրատուրայի 2-րդ կիսամյակի քննաշրջանի ամփոփումը

	բակալավրիատ առկա	մագիստրատուրա	բակալավրիատ հեռակա
ընդամենը	370	37	196
քննութ.մասն.	370	37	186
դրական	351	37	153
պայմանական փոխադրվել է	18	-	33
հեռացման է ներկայացվել	1	-	10

Որոշեցին – աշխատանքային ընթացքը համարել բավարար:

2. Լսեցին – Մանկավարժական և ուսումնական պրակտիկաների արդյունքների ամփոփում:

Արտահայտվեցին – պրակտիկայի ղեկավարներ Մ.Ավետիսյանը և Շ.Մաթևոսյանը ներկայացրեցին 4-րդ կուրսերի պրակտիկայի ավարտի մասին զեկույցներ և արդյունքները համարեցին բավարար, խոսեցին 3-րդ կուրսերի շարունակական պրակտիկաների մասին և աշխատանքները գնահատեցին բավարար, մագիստրատուրա 2-րդ կուրսի ընթացիկ պրակտիկան ունի դրական ընթացք, հստակ որոշված են աշխատանքային ընթացքները:

Որոշեցին – կատարված աշխատանքները համարել բավարար:

3. Լսեցին – 2019-2020 ուստարվա հեռակա ուսուցման ընդունելության քննությունների արդյունքների ամփոփման հարցը

Արտահայտվեցին – ֆակուլտետի դեկան, արվեստագիտության դոկտոր Արա Հակոբյանը, ներկայացրեց 2019-2020 ուստարվա հեռակա ուսուցման ընդունելության քննությունների արդյունքները.

մշակութաբանություն՝ 8
արվեստի տեսություն պատմություն և կառավարում՝ 3
կերպարվեստ՝ 16
երաժշտության մանկավարժություն՝ 16
ընդհամենը՝ 43 ուսանող

Որոշեցին – ընդունելության արդյունքները համարել բավարար

ընթացիկ հարցեր

4. ԼՍԵՑԻՆ - Երաժշտության մանկավարժության ամբիոնի դասախոս Արաքսյա Խաչատրյանի «Խմբերգային պարտիտուրի ընթերցում» ուսումնամեթոդական ձեռնարկի տպագրության երաշխավորելու հարցը

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Երաժշտության մանկավարժության ամբիոնի վարիչի պ/կ, մ.գ.թ., պրոֆեսորի պ/կ Սարգիս Էլբակյանը, մ.գ.դ., պրոֆեսոր Յուրի Յուզբաշյանը, նշեցին, որ աշխատանքը նորույթ է երաժշտության բնագավառում և սրանում նշվում է բազմաձայն երաժշտության, մասնավորապես խմբերգային երաժշտության նոտագրման ձևերը, տեսակները և գրական տեքստի գրառումը: Ձեռնարկը ունի նաև ճանաչողական նշանակություն: Ա.Բաղդասարյանը ներկայացրեց մրցութային հանձնաժողովի դրական կարծիքը: Արաքսյա Խաչատրյանը ներկայացրել է անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը՝ երկու դրական կարծիք, ամբիոնի նիստի քաղվածք (17.10.2019 նիստ հ.3 արձանագրությունից)

ՈՐՈՇԵՑԻՆ – Երաշխավորել հրատարակության Երաժշտության մանկավարժության ամբիոնի դասախոս Արաքսյա Խաչատրյանի «Խմբերգային պարտիտուրի ընթերցում» ուսումնամեթոդական ձեռնարկը:

Կողմ-14
Դեմ- 0
Ձեռնպահ - 0

5. **ԼՍԵՑԻՆ** – Կերպարվեստի ամբիոնի հայցորդ Հասմիկ Մանասյանի <<Գեղարվեստական կրթության արդյունավետության բարձրացման մանկավարժական պայմանները ժամանակակից քոլեջներում>> (կերպարվեստի ստեղծագործնական կամընտրական պարապմունքների օրինակով) խորագրով ատենախոսության թեման և ատենախոսության ղեկավար հաստատելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Յուրի Յուզբաշյանը, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Անուշ Եղիազարյանը, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լեմս Ներսիսյանը: Ելույթ ունեցողները նշեցին, որ թեման արդիական է և ժամանակահունչ այսօրվա քոլեջների գեղարվեստական կրթության մակարդակի բարձրացման համար: Խորհրդի նախագահ Ա.Հակոբյանը ներկայացրեց ատենախոսի ղեկավարին՝ մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լեմս Ներսիսյանին:

ՈՐՈՇԵՑԻՆ – Դիմել Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գիտական խորհրդին հաստատելու Կերպարվեստի ամբիոնի հայցորդ Հասմիկ Մանասյանի <<Գեղարվեստական կրթության արդյունավետության բարձրացման մանկավարժական պայմանները ժամանակակից քոլեջներում>> (կերպարվեստի տեսագործնական կամընտրական պարապմունքների օրինակով) խորագրով ատենախոսության թեման:

Նիստին ներկա էին խորհրդի 20 անդամներից 14-ը:
Կողմ- 14
Դեմ - 0
Ձեռնպահ – 0

6. **ԼՍԵՑԻՆ** – Արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնի 2019-2020 ուստարվա Մշակութաբանություն մասնագիտության մագիստրատուրա 1-ին կուրսի ուսանող Օֆելյա Սարգսյանի մագիստրոսական թեզի խորագրի փոփոխման հարցը: «Երկրորդ աշխարհամարտին մասնակցած ՀՊՄՀ Գեղարվեստական կրթության ֆակուլտետի մանկավարժ-նկարիչները» խորագիրը փոխել «Կերպարվեստ առարկան հայկական կրթական հաստատություններում» խորագրով:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – ֆակուլտետի դեկան, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Արա Հակոբյանը ներկայացրեց փոփոխվող խորագիրը՝ «Կերպարվեստ առարկան հայկական կրթական հաստատություններում»։ Որպես հիմք ընդունված է արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնի հոկտեմբերի 21-ին կայացած h.5 նիստի արձանագրության քաղվածքը։

ՈՐՈՇԵՑԻՆ – «Երկրորդ աշխարհամարտին մասնակցած ՀՊՄՀ Գեղարվեստական կրթության ֆակուլտետի մանկավարժ-նկարիչները» մագիստրոսական ատենախոսության թեմայի խորագիրը փոխել «Կերպարվեստ առարկան հայկական կրթական հաստատություններում» խորագրով։ Հաստատել թեմայի փոփոխությունը։

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ՀԱԿՈԲՅԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ Հ. 3

2019թ. նոյեմբերի 14-ին տեղի ունեցավ գեղարվեստական կրթության ֆակուլտետի խորհրդի նիստ, որն անց է կացվել բանավոր հարցման ձևով

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

Դեկորատիվ-կիրառական արվեստ մասնագիտության 2-րդ կուրսի մագիստրոս Սուսաննա Բաղալյանի ատենախոսության խորագրի փոփոխում

Լսեցին – Դեկորատիվ-կիրառական արվեստ մասնագիտության 2-րդ կուրսի մագիստրոս Սուսաննա Բաղալյանի ատենախոսության խորագրի փոփոխման հարցը։

Արտահայտվեցին - Կերպարվեստի ամբիոնի վարիչ Կարեն Աղամյանը, նիստին հրավիրված ատենաության ղեկավար Մելքոն Ավետիսյանը, նրանք նշեցին, որ մագիստրոսական թեզի ներկայիս «Փայտի գեղարվեստական մշակումը հայկական եկեղեցաշինության մեջ» խորագիրը կարող է ընդգրկվել առավել ծավալուն և հետաքրքիր «Փայտյա կահույքի ոճերը» թեմայի խորագրի ներքո և համապատասխանում է մագիստրոսի հետաքրքրություններին։ Որպես հիմք ընդունելով թեզի ղեկավարի հիմնավորումը և կերպարվեստի ամբիոնի 13.11.2019թ. h.8 նիստի արձանագրության քաղվածքը։

Որոշեցին – Հաստատել դեկորատիվ-կիրառական արվեստ մասնագիտության 2-րդ կուրսի ուսանող Սուսաննա Բաղալյանի ատենախոսության թեմայի խորագիրը «Փայտյա կահույքի ոճերը»։

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ՀԱԿՈԲՅԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ Հ. 4

2019թ. նոյեմբերի 29-ին տեղի ունեցավ գեղարվեստական կրթության ֆակուլտետի խորհրդի նիստը

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. Գիտական աշխատանքների հաշվետվություն, ֆակուլտետի ամբիոններ
2. 2019-2020 ուստարվա ավարտական աշխատանքների ընթացքը
3. Ասպիրանտների և հայցորդների ատեստավորման հարցը
4. Ընթացիկ հարցեր

Նիստին ներկա էին խորհրդի 20 անդամից 14-ը

1. Լսեցին - Գիտական աշխատանքների հաշվետվությունների (ֆակուլտետի ամբիոններ) հարցը

Արտահայտվեցին – ֆակուլտետի ամբիոնների վարիչներ Կ.Աղամյանը, Ս.Էլբակյանը, Ս.Մելիքյանը հաղորդեցին, որ ամբիոնների պրոֆեսորադասախոսական անձնակազմի կողմից հրատարակվել են. կերպարվեստի ամբիոն՝ 3 հոդված, 1 մեթոդական ձեռնարկ, հանձնված է տպագրության 1 հոդված, երաժշտության մանկավարժության ամբիոն՝ 8 հոդված, վերատպվել է 1 դասագիրք, հանձնված են տպագրության 14 հոդված, արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոն՝ 8 հոդված, 2 գիրք, 1 ձեռնարկ, հանձնված է տպագրության 2 հոդված։

Որոշեցին – աշխատանքները համարել բավարար։

2. Լսեցին –2019-2020 ուստարվա ավարտական աշխատանքների ընթացքի մասին

Արտահայտվեցին – ֆակուլտետի ամբիոնների վարիչներ՝ կերպարվեստի ամբիոնի վարիչ Կ.Աղամյանը, երաժշտության մանկավարժության ամբիոնի վարիչի ժ/պ Ս.Էլբակյանը, արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնի վարիչ Ս.Մելիքյանը ներկայացրեցին ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի կատարման ընթացքը: Նրանք նշեցին, որ աշխատանքները ընթանում են համապատասխան աշխատանքային գրաֆիկի:

Որոշեցին – կատարված աշխատանքները համարել բավարար:

3. Լսեցին – Ասպիրանտների և հայցորդների ատեստավորման հարցը

Արտահայտվեցին – Կերպարվեստի ամբիոնի վարիչ Կ.Աղամյանը, երաժշտության մանկավարժության ամբիոնի վարիչի պ/կ Ս.Էլբակյանը, արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնի վարիչ Ս.Մելիքյանը նշեցին, որ ամբիոնների վերջին նիստերում կատարվել են համապատասխան ատեստավորումներ.

կերպարվեստի ամբիոն՝ Լիլիթ Ներսիսյանը ատենախոսության թեմայի շրջանակներում հրատարակել է 3 հոդված, հավաքել և մշակել է ատենախոսության 2 գլուխ, մասնակցել է միջազգային գիտաժողովի,

Հասմիկ Մանասյանը հրատարակել է 3 հոդված, ավարտել է 1-ին գլխի գիտասեսական հիմնավորմանը անհրաժեշտ նյութերի հավաքագրումը,

Մարուսյա Մանասյանը հրատարակել է 3 հոդված, մշակել է փորձարարական աշխատանքների ծրագիրը

երաժշտության մանկավարժության ամբիոն՝ Գայանե Հարությունյանը 2019-ին հանձնել է փիլիսոփայություն, անգլերեն և ՏՀՏ առարկաներից մինիմում քննությունները, հրատարակության է հանձնել 2 հոդված, գրել է ատենախոսության 1-ին և 2-րդ և աշխատում է 3-րդ գլխի վրա (շարադրում է մանկավարժական գիտափորձը),

Մերի Բաղդասարյանը տպագրության է հանձնել մեկ հոդված, հանձնել է փիլիսոփայություն առարկայի մինիմում քննությունը, գրել է ատենախոսության 2-րդ գլխի չորս ենթամասերը

արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոն՝ Միհրդատ Մոմենի Մոհամմադբաղերինը աշխատում է ատենախոսության 3-րդ գլխի վրա:

Որոշեցին – Ատեստավորել՝ երաժշտության մանկավարժության ամբիոնի հայցորդներ Մերի Բաղդասարյանին և Գայանե Հարությունյանին, կերպարվեստի ամբիոնի հայցորդներ Հասմիկ Մանասարյանին, Լիլիթ Ներսիսյանին, Մարուսյա Մանասյանին, արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնի հայցորդ Միհրդատ Մոմենի Մոհամմադբաղերինին:

ընթացիկ հարցեր

4. ԼՍԵՑԻՆ - Կերպարվեստի ամբիոնի դասախոս Դավիթ Հովհաննիսյանի «Գծանկար առարկայի ուսուցման մեթոդները ՀՊՄՀ գեղարվեստական կրթության ֆակուլտետի կերպարվեստ մասնագիտության դասընթացում» ուսումնամեթոդական ձեռնարկի տպագրության երաշխավորելու հարցը

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Կերպարվեստի ամբիոնի վարիչ Կ.Աղամյանը, նշեց, որ ներկայացված ուսումնամեթոդական ձեռնարկը արդիական աշխատություն է: Այն կարևորվում է նրանով, որ հեղինակը ներկայացրել է ՀՊՄՀ-ի բակալավրիատի Կերպարվեստ մասնագիտության գծանկար առարկայի դասավանդման նպատակն ու խնդիրները, դրանց լուծմանը նպաստող մեթոդները և ուսուցման նոր մոտեցումները: Ձեռնարկի հիմքում ընկած են վերջին տարիներին մշակված առարկայական նկարագրերն ու թեմատիկ տրոհումները: Ձեռնարկը ունի կարևոր նշանակություն դասավանդվող առարկայի շրջանակներում: Ա.Բաղդասարյանը ներկայացրեց մրցութային հանձնաժողովի դրական կարծիքը:

Դավիթ Հովհաննիսյանը ներկայացրել է անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը՝ երկու դրական կարծիք, ամբիոնի նիստի քաղվածք (13.11.2019 նիստ հ.8 արձանագրությունից)

ՈՐՈՇԵՑԻՆ – Երաշխավորել հրատարակության Կերպարվեստի ամբիոնի դասախոս Դավիթ Հովհաննիսյանի «Գծանկար առարկայի ուսուցման մեթոդները ՀՊՄՀ գեղարվեստական կրթության ֆակուլտետի կերպարվեստ մասնագիտության դասընթացում» ուսումնամեթոդական ձեռնարկը:

Կողմ-14

Դեմ- 0

Ձեռնպահ - 0

5. **ԼՍԵՑԻՆ** – Ճապոնիայի Սագա համալսարանի Տարածաշրջանային դիզայնի և կերպարվեստի ֆակուլտետից ժամանող խմբի հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – ֆակուլտետի դեկան պրոֆեսոր Ա.Հակոբյանը ներկայացրեց ժամանող խմբի կազմը և համապատասխան քայլերը: Դեկանի տեղակալ Լ.Այվազյանը ներկայացրեց ճապոնական կողմի հետաքրքրությունների շրջանակներում կազմած դասացուցակը: Ներկայացված դասացուցակը հաշվառված է 05.12-10.12.2019թ. ընկած ժամանակահատվածի համար:

ՈՐՈՇԵՑԻՆ – կազմակերպչական աշխատանքները համարել բավարար:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ՀԱԿՈԲՅԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ Հ. 5

2019թ. դեկտեմբերի 9-ին տեղի ունեցավ գեղարվեստական կրթության ֆակուլտետի խորհրդի նիստ, որն անց է կացվել բանավոր հարցման ձևով

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

Գեղարվեստական կրթության ֆակուլտետի 2019թ. հաշվետվության հարցը

1. ԼՍԵՑԻՆ - Գեղարվեստական կրթության ֆակուլտետի 2019թ. տարեկան հաշվետվության հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Գեղարվեստական կրթության ֆակուլտետի դեկան՝ արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Արա Հակոբյանը, ուսումնական գծով դեկանի տեղակալ Լ.Այվազյանը, գիտության և միջազգային համագործակցության հարցերով դեկանի տեղակալ Ա.Բաղդասարյանը, կերպարվեստի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Կ.Աղամյանը, երաժշտության մանկավարժության ամբիոնի վարիչի պ/կ, պրոֆոսորի պ/կ Ս. Էլբակյանը, արվեստի պատմության տեսության և մշակութաբանության ամբիոնի վարիչ դոցենտ Ս.Մելիքյանը նշեցին, որ 2019թ. ֆակուլտետի յուրաքանչյուր ամբիոն կատարել է հաշվետվություն, որոնք և հիմք են հանդիսացել ֆակուլտետի հաշվետվության համար:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել 2019 թվականի Գեղարվեստական կրթության ֆակուլտետի հաշվետվությունը:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ՀԱԿՈԲՅԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ Հ. 6

2019թ. դեկտեմբերի 16-ին տեղի ունեցավ գեղարվեստական կրթության ֆակուլտետի խորհրդի նիստ, որն անց է կացվել բանավոր հարցման ձևով

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

Գեղարվեստական կրթության ֆակուլտետի 2019-2020 ուստարվա երաժշտության մանկավարժության ամբիոնի «երաժշտական կրթություն» մասնագիտության, կերպարվեստի ամբիոնի «կերպարվեստ» մասնագիտության համար հեռակա ուսուցման գործող համակարգի մասին

ԼՍԵՑԻՆ - Գեղարվեստական կրթության ֆակուլտետի 2019-2020 ուստարվա «երաժշտական կրթություն» մասնագիտության, «կերպարվեստ» մասնագիտությունների համար հեռակա ուսուցման գործող համակարգի մասին հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ –երաժշտության մանկավարժության ամբիոնի վարիչի պ/կ, պրոֆոսոր պ/կ Ս. Էլբակյանը, կերպարվեստի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Կ.Աղամյանը ներկայացրեցին գործող համակարգի ներքո ծառացած խնդիրները: Էլեկտրոնային խորհրդատվությունները, էլեկտրոնային միջանկյալ ստուգումները չեն կարող ապահովել ծրագրով նախատեսված ելքային արդյունքները: Նվագարան, խմբավարություն և խմբերգային դասարան, ձայնադրում, նվագակցության դասարան, սոլֆեջիոն և հարմոնիա առարկաները հիմնականում կրում են ուսուցման անհատական բնույթ և դրանց կազմակերպումը էլեկտրոնային խորհրդատվության և էլեկտրոնային միջանկյալ ստուգման ձևով դյուրին չէ, կերպարվեստ մասնագիտության շրջանակներում՝ գունանկար, կոմպոզիցիա, գծանկար, գրաֆիկա, հաստոցային գրաֆիկա, քանդակ և պլաստիկ անատոմիա, գծագրություն, գրքի գեղարվեստական ձևավորում, համակարգչային գրաֆիկա առարկաների պարագայում

գործող համակարգը թույլ չի տալիս ապահովել ծրագրով նախատեսված ելքային արդյունքները: Առաջարկվում է ուսումնական պրոցեսը կազմակերպել ներկայացվող կետերի ներքո՝

1.ուսումնական առարկաների միջանկյալ ստուգումները իրականացնել կիսամյակային դասերից հետո

2.տեսական առարկաների երկու կիսամյակի առարկաների ծանրաբեռնվածությունը թողնել հունվար-փետրվար ամիսներին, իսկ գործնական առարկաների երկրորդ կիսամյակի ծանրաբեռնվածությունը տեղափոխել հունիս ամիս

3.նշված առարկաների խորհրդատվությունները և միջանկյալ ստուգումները անցկացնել առերես:

ՈՐՈՇԵՑԻՆ –վերը նշված առաջարկով դիմել Կրթական գործընթացների կառավարման և բարեփոխումների վարչության պետ՝ Մ.Ավագյանին, հարցին լուծում տալու նպատակով:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ՀԱԿՈԲՅԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ Հ. 7

2019թ. դեկտեմբերի 25-ին տեղի ունեցավ գեղարվեստական կրթության ֆակուլտետի խորհրդի նիստը

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1.2019-2020 ուստարվա առկա ուսուցման 1-ին կիսամյակի քննաշրջանի նախապատրաստական աշխատանքները

2.Հեռակա ուսուցման 2019-2020 ուստարվա ուսումնական գործընթացի նախապատրաստում

3. Ընթացիկ հարցեր

Նիստին ներկա էին խորհրդի 20 անդամից 13-ը

1. **Լսեցին -** 2019-2020 ուստարվա առկա ուսուցման 1-ին կիսամյակի քննաշրջանի նախապատրաստական աշխատանքների հարցը

Արտահայտվեցին – Ուսումնական գծով դեկանի տեղակալ Լ.Այվազյանը ներկայացրեց 2019-2020 ուստարվա 1-ին կիսամյակի քննությունների գրաֆիկը:

Որոշեցին – Աշխատանքը համարել կատարված:

2. Լսեցին – Հեռակա ուսուցման 2019-2020 ուստարվա ուսումնական գործընթացի նախապատրաստման հարցը

Արտահայտվեցին – Ուսումնական գծով դեկանի տեղակալ Լ.Այվազյանը ներկայացրեց 2019-2020 ուստարվա հեռական ուսուցման նախապատրաստական գործընթացը: Նշեց որ կազմված են բոլոր դասացուցակները:

Որոշեցին – Աշխատանքը համարել կատարված:

ընթացիկ հարցեր

3. ԼՍԵՑԻՆ – Զարգացման ռազմավարական ծրագրի 2018-2019 թվականների գործողությունների կատարման հաշվետվությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – գիտության գծով դեկանի տեղակալ Ա.Բաղդասարյանը ներկայացրեց 2018-2019 թվականների ֆակուլտետի ռազմավարական ծրագրի շրջանակներում կատարված համապատասխան կետերը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել զարգացման ռազմավարական ծրագրի 2018-2019 թվականների գործողությունների կատարման հաշվետվությունը:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ՀԱԿՈԲՅԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ Հ. 8

2020թ. հունվարի 31-ին տեղի ունեցավ գեղարվեստական կրթության ֆակուլտետի
խորհրդի նիստը

1. 2019-2020 ուստարվա մանկավարաժական և ուսումնական պրակտիկաների նախապատրաստում
2. Ընթացիկ հարցեր

Նիստին ներկա էին խորհրդի 20 անդամից 15-ը

1. Լսեցին - 2019-2020 ուստարվա 2-րդ կիսամյակի աշխատանքային պլանի հաստատման հարցը

Արտահայտվեցին – ֆակուլտետի դեկան, արվեստագիտության դոկտոր Արա Հակոբյանը, ներկայացրեց կիսամյակի աշխատանքային պլանը

Որոշեցին – հաստատել 2019-2020 ուստարվա 2-րդ կիսամյակի աշխատանքային պլանը։

2. Լսեցին – 2019-2020 ուստարվա 1-ին կիսամյակի քննաշրջանի արդյունքների հաշվետվությունը

Արտահայտվեցին – Ուսումնական գծով դեկանի տեղակալ Լ.Այվազյանը ներկայացրեց 2019-2020 ուստարվա 1-ին կիսամյակի քննաշրջանի արդյունքները

Ֆակուլտետ /մասնագիտությունը/	Կուրս	Քննությունների մասնակցել են	Ստացել են դրական գնահատական				Ստացել են անբավարար գնահատական				
			Բոլոր առարկաներից	Միայն "գերազանց" գնահատականներով	Միայն "գերազ." և "լավ" գնահատականներով	Խառը գնահատականներով	Ընդամենը	Մեկ անբավարար	Երկու անբավարար	Երեք և ավելի անբավարար	չեն մասնակցել
Բակալավր		*1*	*2*	*3*	*4*	*5*	*6*	*7*	*8*	*9*	
Կերպարվեստ	I	31	*26*	2	6	18	*5*	5	-	-	-
	II	29	*19*	-	5	14	*10*	6	3	1	-
	III	37	*26*	-	8	18	*11*	3	1	7	-
	IV	56	*44*	4	9	31	*12*	5	3	4	-
Արվ.տես.պատմ.և կառավ.	I	5	*5*	-	2	3	-	-	-	-	-
	II	4	*2*	-	-	2	*2*	2	-	-	-
	III	8	*6*	1	2	3	*2*	2	-	-	-
	IV	11	*8*	1	1	6	*3*	-	3	-	-
Մշակութաբանություն	I	7	*6*	1	4	1	*1*	1	-	-	-
	II	2	*2*	-	1	1	-	-	-	-	-
	III	14	*8*	2	3	3	*6*	4	-	2	-
	IV	20	*16*	1	6	9	*4*	2	-	2	-
Հագուստի մոդելավորում	I	30	*19*	-	2	17	*11*	8	2	1	-
	II	16	*3*	-	1	2	*13*	3	5	5	-
	III	12	*9*	1	4	4	*3*	3	-	-	-
	IV	28	*19*	-	4	15	*9*	4	2	3	-
Դեկոր.կիրառ. արվեստ	I	18	*11*	-	3	8	*7*	4	2	1	-
	II	15	*13*		5	8	*2*	2	-	-	-
	III	19	*13*	2	3	8	*6*	3	-	3	-
	IV	24	*19*	2	3	14	*5*	1	1	3	-
Երաժշտական կրթութ.	I	29	*16*	-	1	15	*13*	6	2	5	-
	II	18	*9*	-	3	6	*9*	1	3	5	-
	III	24	*8*	-	2	6	*16*	7	5	4	-
	IV	26	*15*	-	4	11	*11*	7	2	2	-
ուսանող. թիվ		*483*	322	17	82	223	161	79	34	47	
ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱ											
Մագիստրատուրա											
Կերպարվեստ	I	7	4	3	-	1	3	1	2	-	-
	II	14	11	2	4	5	3	1	2	-	-
Արվ.տես.պատմ.և կառավ.	I	2	2	1	1	-	-	-	-	-	-
	II	4	4	2	1	1	-	-	-	-	-
Մշակութաբանություն	I	2	1	1	-	-	1	-	1	-	-
	II	3	3	3	-	-	-	-	-	-	-

Դեկոր.կիրառ. արվեստ	I	**3**	3	3	-	-	-	-	-	-	-
	II	**5**	5	3	2	-	-	-	-	-	-
Երաժշտական կրթութ.	I	**5**	3	-	1	2	2	-	1	1	-
	II	**11**	5	-	1	4	6	2	3	1	-
ուսանող. թիվ		**56**	**41**	18	10	13	**15**	4	9	2	

Որոշեցին – Արդյունքները համարել բավարար:

3. Լսեցին – 2019-2020 ուստարվա մանկավարժական և ուսումնական պրակտիկաների նախապատրաստման հարցը:

Արտահայտվեցին – Ֆակուլտետի պրակտիկայի ղեկավարներ՝ Մ.Ավետիսյանը և Շ.Մաթևոսյանը ներկայացրեցին հեռակա և առկա ուսուցման բաժինների պրակտիկաների բազաները և բաշխված խմբերը, նշեցին նաև այն ուսանողների անունները, որոնք իրենց պրակտիկան կանցկացնեն իրենց աշխատանքային վայրերում՝ դպրոցներում:

Որոշեցին – Աշխատանքները համարել կատարված:

ընթացիկ հարցեր

4. Լսեցին – Գեղարվեստական կրթության ֆակուլտետի կերպարվեստ, դեկորատիվ-կիրառական արվեստ, հագուստի մոդելավորում առկա ուսուցման 2-րդ կուրսերի ուսումնաճանաչողական և ուսումնական պրակտիկաները պլեներային պրակտիկայի վերափոխելու հարցը:

Արտահայտվեցին – ելույթ ունեցան կերպարվեստի ամբիոնի վարիչ պրոֆեսոր Կարեն Աղամյանը, դոկտոր, պրոֆեսոր Լեմս Ներսիսյանը: Նրանք հիմնավորեցին պլեներային պրակտիկայի անհրաժեշտությունը նշված մասնագիտությունների համար:

Որոշեցին – կերպարվեստ, դեկորատիվ-կիրառական արվեստ, հագուստի մոդելավորում առկա ուսուցման 2-րդ կուրսերի 2-րդ կիսամյակի ուսումնաճանաչողական և ուսումնական պրակտիկաները փոխարինել պլեներային պրակտիկայով:

5. Լսեցին – ֆակուլտետի զարգացման ռազմավարական ծրագրի 2020 թվականի գործողությունների կատարման պլանը:

Արտահայտվեցին – գիտության գծով դեկանի տեղակալ Ա.Բաղդասարյանը ներկայացրեց 2020 թվականի ռազմավարական ծրագիրը:

Որոշեցին – հաստատել 2020 թվականի գործողությունների կատարման պլանը:

6. **ԼՍԵՑԻՆ** – Կերպարվեստի ամբիոնի հայցորդ Տարոն Ալեքսանյանի <<Գրաֆիկական դիզայնի ուսուցման հիմնախնդիրը բուհական համակարգում>> խորագրով ատենախոսության թեման և ատենախոսության ղեկավար հաստատելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – կերպարվեստի ամբիոնի վարիչ պրոֆեսոր Կ. Աղամյանը, պրոֆեսոր Լ.Ներսիսյանը, պրոֆեսոր Ս.Աղաջանյանը: Ելույթ ունեցողները նշեցին, որ թեման արդիական է և ժամանակահունչ, այն անհրաժեշտ է դասավանդման պրոցեսում: Խորհրդի նախագահ Ա.Հակոբյանը ներկայացրեց ատենախոսի ղեկավարին՝ մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Անուշ Եղիազարյանին:

ՈՐՈՇԵՑԻՆ – Դիմել Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գիտական խորհրդին հաստատելու Կերպարվեստի ամբիոնի հայցորդ Տարոն Ալեքսանյանի << Գրաֆիկական դիզայնի ուսուցման հիմնախնդիրը բուհական համակարգում>> խորագրով ատենախոսության թեման, ԺԳ.00.02 (դասավանդման և դաստիարակության մեթոդիկա), ատենախոսության ղեկավար հաստատել մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Անուշ Եղիազարյանին:

Նիստին ներկա էին խորհրդի 20 անդամներից 14-ը:

Բաց քվեարկության արդյունքում

Կողմ- 14

Դեմ - 0

Ձեռնպահ – 0

7. **ԼՍԵՑԻՆ** - Արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնի պրոֆեսոր, դոկտոր Սերգեյ Արարատի Աղաջանյանի «Մշակույթի տեսություն» ուսումնական ձեռնարկի հրատարակության երաշխավորելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Գեղարվեստական կրթության ֆակուլտետի դեկան, պրոֆեսոր Ա.Հակոբյանը, արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնի վարիչ, դոցենտ Ս.Մելիքյանը, կերպարվեստի ամբիոնի պրոֆեսոր Լ.Ներսիսյանը, երաժշտության մանկավարժության ամբիոնի վարիչի պ/կ, պրոֆեսորի պ/կ Ս.Էլբակյանը: Ելույթ ունեցողները նշեցին, որ ներկայացված ուսումնական ձեռնարկը արդիական աշխատություն է, եզակի է իր որակով և մոտեցման լրջությամբ, այն հագեցած է գիտական հիմնավորումներով: Աշխատությունը երկարատև հետազոտական աշխատանքի արդյունք է, անհրաժեշտ և օգտակար կլինի մասնագետներին, ուսանողությանը և հասարակությանը:

Ա.Բաղդասարյանը ներկայացրեց մրցութային հանձնաժողովի դրական կարծիքը: Ս.Աղաջանյանը ներկայացրել է անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը՝ ուսումնական ձեռնարկը, երկու դրական կարծիք, հիմնավորում, ամբիոնի նիստի քաղվածք (29.01.2020թ. հ.10 նիստի արձանագրությունից):

ՈՐՈՇԵՑԻՆ – Դիմել Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գիտական խորհրդին հրատարակության երաշխավորելու Արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնի պրոֆեսոր, բանասիրական գիտությունների դոկտոր Սերգեյ Արարատի Աղաջանյանի <<Մշակույթի տեսություն>> ուսումնական ձեռնարկը:

Նիստին ներկա էին խորհրդի 20 անդամներից 15-ը:

Բաց քվեարկության արդյունքում

Կողմ - 14

Դեմ - 0

Ձեռնպահ - 0

8. **ԼՍԵՑԻՆ** – Արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնի ասիստենտ, արվեստագիտության թեկնածու Արմինե Սուրենի Բաղդասարյանին դոցենտի գիտական կոչման ներկայացնելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – գեղարվեստական կրթության ֆակուլտետի դեկան, պրոֆեսոր Ա.Հակոբյանը, արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնի վարիչ, դոցենտ Ս.Մելիքյանը, կերպարվեստի ամբիոնի պրոֆեսոր Լ.Ներսիսյանը, երաժշտության մանկավարժության ամբիոնի վարիչի պ/կ, պրոֆեսորի պ/կ Ս.Էլբակյանը: Ելույթ ունեցողները նշեցին, որ Արմինե Բաղդասարյանը ունի երկար տարիների աշխատանքային փորձ, հեղինակություն է վայելում ուսանողների և դասախոսների շրջանում, դրսևորում է բարձր մասնագիտական կարողություններ, բարեխիղճ և պատասխանատու է մանկավարժական գործունեության մեջ: Ունի 12-ից ավելի գիտական հոդվածներ, որոնք հրատարակվել են հայրենական և արտասահմանյան գիտական ամսագրերում և ժողովածուներում: Արմինե Բաղդասարյանն ունի նաև մենագրություն և ուսումնամեթոդական ձեռնարկ:

Կ.Աղամյանը ներկայացրեց մրցութային հանձնաժողովի դրական կարծիքը. առկա բոլոր փաստաթղթերը, ամբիոնի նիստի քաղվածքը (29.01.2020թ. հ.10 նիստի արձանագրությունից):

ՈՐՈՇԵՑԻՆ – Դիմել Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գիտական խորհրդին Արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնի ասիստենտ, արվեստագիտության թեկնածու Արմինե Սուրենի Բաղդասարյանին դոցենտի գիտական կոչում շնորհելու համար:

Նիստին ներկա էին խորհրդի 20 անդամներից 15-ը:

Բաց քվեարկության արդյունքում

Կողմ-14

Դեմ- 0

Ձեռնպահ - 0

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ՀԱԿՈԲՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ Հ. 9

2020թ. փետրվարի 5-ին տեղի ունեցավ գեղարվեստական կրթության ֆակուլտետի խորհրդի նիստ, որն անց է կացվել բանավոր հարցման ձևով

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

Գեղարվեստական կրթության ֆակուլտետի 2019-2020 ուստարվա երաժշտության մանկավարժության ամբիոնի «երաժշտական կրթություն» մասնագիտության համար հեռակա ուսուցման գործող համակարգի մասին

ԼՍԵՑԻՆ - Գեղարվեստական կրթության ֆակուլտետի 2019-2020 ուստարվա «երաժշտական կրթություն» մասնագիտության համար հեռակա ուսուցման գործող համակարգի մասին հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ –երաժշտության մանկավարժության ամբիոնի վարիչի պ/կ, պրոֆոսորի պ/կ Ս. Էլբակյանը ներկայացրեց գործող համակարգի ներքո ծառացած խնդիրները: Էլեկտրոնային խորհրդատվությունները, էլեկտրոնային միջանկյալ ստուգումները չեն կարող ապահովել ծրագրով նախատեսված ելքային արդյունքները: Նվագարան, խմբավարություն և խմբերգային դասարան, ձայնադրում, նվագակցության դասարան, սոլֆեջիոն և հարմոնիա առարկաները հիմնականում կրում են ուսուցման անհատական բնույթ և դրանց կազմակերպումը էլեկտրոնային խորհրդատվության և էլեկտրոնային միջանկյալ ստուգման ձևով դյուրին չէ, գործող համակարգը թույլ չի տալիս ապահովել ծրագրով նախատեսված ելքային արդյունքները: Առաջարկվում է ուսումնական պրոցեսը կազմակերպել ներկայացվող կետերի ներքո՝

1.ուսումնական առարկաների միջանկյալ ստուգումները իրականացնել կիսամյակային դասերից հետո

2.տեսական առարկաների երկու կիսամյակի առարկաների ծանրաբեռնվածությունը թողնել հունվար-փետրվար ամիսներին, իսկ գործնական առարկաների երկրորդ կիսամյակի ծանրաբեռնվածությունը տեղափոխել հունիս ամիս

3.նշված առարկաների խորհրդատվությունները և միջանկյալ ստուգումները անցկացնել առերես:

ՈՐՈՇԵՑԻՆ –վերը նշված առաջարկով դիմել Կրթական գործընթացների կառավարման և բարեփոխումների վարչության պետ՝ Մ.Ավագյանին, հարցին լուծում տալու նպատակով:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ՀԱԿՈԲՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ Հ. 10

2020թ. փետրվարի 28-ին տեղի ունեցավ գեղարվեստական կրթության ֆակուլտետի խորհրդի նիստը

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. ֆակուլտետի առկա ուսուցման մանկավարժական և ուսումնական պրակտիկաների ընթացքը
2. ամբիոնների կիսամյակային միջոցառումների ցանկը
3. ընթացիկ հարցեր

Նիստին ներկա էին խորհրդի 20 անդամից 13-ը

1. Լսեցին - ֆակուլտետի առկա ուսուցման մանկավարժական և ուսումնական պրակտիկաների ընթացքի հարցը

Արտահայտվեցին – ֆակուլտետի պրակտիկայի ղեկավարներ Մ.Ավետիսյանը և Շ.Մաթևոսյանը ներկայացրեցին պրակտիկայի ընթացքը և առաջացած խնդիրները: Կերպարվեստի և արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնների պրակտիկաները ընթանում են նախանշված համակարգով, երաժշտական մանկավարժության ամբիոնում առաջացած խնդիրը ուսանողի անվան հետ կապված գտնվում է ճշտման ընթացքում:

Որոշեցին – պրակտիկաների ընթացքը համարել բավարար և վերահսկել պրակտիկայի վարչություն ներկայացված դիմումի կատարողականը:

2. Լսեցին – ամբիոնների կիսամյակային միջոցառումների ցանկը

Արտահայտվեցին – արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնի վարիչ՝ դոցենտ Ս.Մելիքյանը, երաժշտության մանկավարժության ամբիոնի վարիչի պ/կ՝ պրոֆեսորի պ/կ Ս.Էլբակյանը

ներկայացրեցին ամբիոնների նիստերում հաստատված միջոցառումների ցանկը, կերպարվեստի ամբիոնի վարիչ՝ պրոֆեսոր Կ.Աղամյանը միջոցառումների ցանկ չներկայացրեց։

Որոշեցին – կիսամյակային միջոցառումների ցանկը, որը ներկայացրել էին արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության և երաժշտության մանկավարժության ամբիոնները համարել բավարար, կերպարվեստի ամբիոնինը՝ անբավարար։

ընթացիկ հարցեր

3. Լսեցին - Արվեստի տեսություն, պատմություն և կառավարում նաև մշակութաբանություն մասնագիտությունների հեռակա ուսուցման համակարգի ընդունելության հարցը։

Արտահայտվեցին – Խորհրդի նախագահ արվեստագիտության դոկտոր, պրեֆեսոր Ա. Հակոբյանը, արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնի վարիչ արվեստագիտության թեկնածու, դոցենտ Ս. Մելիքյանը, կերպարվեստի ամբիոնի պրոֆեսոր, մանկավարժական գիտությունների դոկտոր Լ. Ներսիսյանը, արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնի ասիստենտ, արվեստագիտության թեկնածու Ա. Բաղդասարյանը, կերպարվեստի ամբիոնի դոցենտ Մ. Մելքոնյանը և այլք։ Նրանք նշեցին, որ հաշվի առնելով արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնի կարծիքը, նաև վերը նշված մասնագիտություններում դիմորդների սակավաթիվ լինելը և դրանից բխող կուրսերի փոքրաքանակությունը, առաջարկվեց, 2020-2021 ուսումնական տարվա հեռակա ուսուցման ընդունելության քննությունների մասնագիտությունների ցանկում չներառել արվեստի տեսություն, պատմություն և կառավարում նաև մշակութաբանություն մասնագիտությունները։

Որոշեցին – Համալսարանի ռեկտորին և ընդունող հանձնաժողովին ներկայացնել առաջարկ, 2020-2021 ուսումնական տարվա հեռակա ուսուցման ընդունելության քննությունների մասնագիտությունների ցանկում չներառել արվեստի տեսություն, պատմություն և կառավարում նաև մշակութաբանություն մասնագիտությունները։

4. Լսեցին – ֆակուլտետի պատկերանիշի (լոգո) փոփոխության հարցը։

Արտահայտվեցին – ֆակուլտետի դեկան՝ արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Ա.Հակոբյանը ներկայացրեց նոր պատկերանիշը, նշելով, որ այն ժամանակակից է և առավել շահավետ է ներկայացնում գործող մասնագիտությունները։

Որոշեցին – դիմել համալսարանի ղեկավարությանը կատարել համապատասխան փոփոխությունները։

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ՀԱԿՈԲՅԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ Հ. 11

2020թ. մարտի 30-ին տեղի ունեցավ գեղարվեստական կրթության ֆակուլտետի
խորհրդի նիստը (առցանց)

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. 2019-2020 ուստարվա առկա ուսուցման մանկավարժական և ուսումնական պրակտիկաների ընթացքը ներկա պայմաններում
2. ամբիոնների վարիչների հաշվետվությունը մագիստրոսական ատենախոսությունների կատարման ընթացքի մասին
3. մագիստրատուրայի մանկավարժահետազոտական և մասնագիտական պրակտիկաների նախապատրաստում
4. ամբիոնների կատարած աշխատանքների հաշվետվություն (ամբիոններ)
5. ընթացիկ հարցեր

Նիստին ներկա էին խորհրդի 20 անդամից 14-ը

1. Լսեցին - 2019-2020 ուստարվա առկա ուսուցման մանկավարժական և ուսումնական պրակտիկաների ընթացքը ներկա պայմաններում

Արտահայտվեցին – ֆակուլտետի պրակտիկայի ղեկավարներ Մ. Ավետիսյանը և Շ. Մաթևոսյանը իրենց ելույթներում նշեցին, որ երկրորդ կուրսերի պրակտիկաները ընթանում են առանց խոչընդոտ՝ երաժշտության

մանկավարժության ամբիոնի ուսանողները աշխատում են դպրոցների հետ առցանց և մասնակցում են դասաժամերին ու կատարում առաջադրանքները, կերպարվեստի ամբիոնի ուսանողները կատարում են պլեներային առաջադրանքներ իսկ արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնի ուսանողները կատարում են թանգարանային պրակտիկայի շրջանակներում ստացված անհատական առաջադրանքները: Ֆակուլտետի անավարտ մնացած երրորդ կուրսի պրակտիկան (2 շաբաթ) առայժմ գտնվում է առաջարկների դաշտում:

Որոշեցին – Առաջարկով դիմել համալսարանի պրակտիկայի վարչություն:

2.Լսեցին – ամբիոնների վարիչների հաշվետվությունը մագիստրոսական ատենախոսությունների կատարման ընթացքի մասին

Արտահայտվեցին – երաժշտության մանկավարժության ամբիոնի վարիչ Ս. Էլբակյանը, կերպարվեստի ամբիոնի վարիչ Կ. Աղամյանը, արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնի վարիչ Ս.Մելիքյանը: Ամբիոնների վարիչները զեկուցեցին, որ բոլոր մասնագիտությունների շրջանակներում նախապաշտպանություններ իրագործվող ստուգման ժամանակացույցը նախատեսված է ապրիլի 1-11-ը:

Որոշեցին –աշխատանքների ընթացքը համարել բավարար:

3. Լսեցին – մագիստրատուրայի մանկավարժահետազոտական և մասնագիտական պրակտիկաների նախապատրաստման հարցը:

Արտահայտվեցին – ուսումնական գծով դեկանի տեղակալ Լ. Այվազյանը զեկուցեց, որ հաշվի առնելով երկրում տիրող արտակարգ իրավիճակը պրակտիկաները կանցկացվեն առցանց համապատասխան հղումների միջոցով թույլատրված ժամանակացույցին համապատասխան:

Որոշեցին – Աշխատանքները համարել բավարար:

4. Լսեցին – ամբիոնների կատարած աշխատանքների հաշվետվությունների հարցը:

Արտահայտվեցին –Ֆակուլտետի ամբիոնների վարիչները զեկուցեցին, որ ստեղծված պայմաններում ընթանում են բոլոր դասընթացները, կատարվում են բոլոր գրառումները և վերահսկման աշխատանքները:

Որոշեցին – Աշխատանքները համարել բավարար:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ՀԱԿՈԲՅԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ Հ. 12

2020թ. ապրիլի 29-ին տեղի ունեցավ գեղարվեստական կրթության ֆակուլտետի
խորհրդի նիստը (առցանց)

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. 2019-2020 ուստարվա առկա ուսուցման ամփոփիչ ատեստավորման նախապատրաստում (զեկ.ամբիոնի վարիչներ)
2. ընթացիկ հարցեր

Նիստին ներկա էին խորհրդի 20 անդամից 14-ը

1. Լսեցին - 2019-2020 ուստարվա առկա ուսուցման ամփոփիչ ատեստավորման նախապատրաստում (զեկ.ամբիոնի վարիչներ)

Արտահայտվեցին – երաժշտության մանկավարժության ամբիոնի վարիչ Ս. Էլբակյանը, կերպարվեստի ամբիոնի վարիչ Կ. Աղամյանը, արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնի վարիչ Ս.Մելիքյանը: Իրենց ելույթներում Ս.Էլբակյանը և Ս.Մելիքյանը նշեցին, որ կատարված են բոլոր նախապատրաստական աշխատանքները՝ անցկացված են նախապաշտպանությունները: Կ.Աղամյանը իր ելույթում նշեց, որ կերպարվեստի ամբիոնի նախապաշտպանությունները կկայանան մայիսի առաջին շաբաթվա ընթացքում:

Որոշեցին – աշխատանքները համարել բավարար:

Ընթացիկ հարցեր

2.Լսեցին – 2019-2020 ուստարվա 4-րդ կուրսի հինգ ուսանողի կամավորական գործունեության համար հավելյալ միավորներ տրամադրելու հարցը

Արտահայտվեցին –ֆակուլտետի փոխդեկան Ա.Բաղդասարյանը ներկայացրեց այն ուսանողների անունները, որոնք ուսման ընթացքում կատարել են կամավորական աշխատանք «Հեքիաթային կիրճ» մանկական տուրիստական հանգստի կենտրոնում և տնօրեն Ա. Բաղալյանի կողմից տրամադրվել են համապատասխան փաստաթղթային հիմքեր՝ Ասրյան Էլինա-200 ժամ, Գաբրիելյան Լուիզա-200 ժամ, Պողոյան Ալլա-200 ժամ, Պողոսյան Նելի-200 ժամ, Մարգարյան Անահիտ-200 ժամ։

Որոշեցին – համապատասխան հաշվարկի արդյունքում (200×0.025=5) ամեն ուսանողին կամավորական գործունեության համար տրամադրել հավելյան 5 (հինգ) միավոր։

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ՀԱԿՈԲՅԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ Հ. 13

2020թ. մայիսի 27-ին տեղի ունեցավ գեղարվեստական կրթության ֆակուլտետի
խորհրդի նիստը (առցանց)

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. 2019-2020 ուստարվա ավարտական կուրսերի քննաշրջանի պարտքերի մարման արդյունքների ամփոփում
2. 2019-2020 ուստարվա 2-րդ կիսամյակի քննաշրջանի նախապատրաստում
3. ընթացիկ հարցեր

Նիստին ներկա էին խորհրդի 20 անդամից 14-ը

1. Լսեցին - 2019-2020 ուստարվա ավարտական կուրսերի քննաշրջանի արդյունքների ամփոփման հարցը

Արտահայտվեցին – Ուսումնական գծով դեկանի տեղակալ Լ.Այվազյանը ներկայացրեց 2019-2020 ուստարվա առկա բակալավրիատի և մագիստրատուրայի ավարտական կուրսերի քննաշրջանի արդյունքները

բակալավրիատ

մասնագիտություն	**քննությունները հանձնած**	**հեռացված**
մշակութաբանություն	19	1 ուս.
կերպ.պատմ. և տես.	11	-
կերպ.և գծագրություն	56	1 ուս.
երաժշտ.կրթություն	26	-
կիրառական արվեստ	24	-
հագուստի մոդելավորում	27	1 ուս.

մագիստրատուրա

մասնագիտություն	**քննությունները հանձնած**	**հեռացված**
կերպարվեստ	14	-
երաժշտ.կրթություն	10	-
դկա	5	-
արվ.տես., պատմ. և կառ.	4	-
մշակութաբանություն	3	-

Որոշեցին – քննաշրջանի արդյունքները համարել բավարար։

2. Լսեցին – 2019-2020 ուստարվա 2-րդ կիսամյակի քննաշրջանի նախապատրաստման հարցը

Արտահայտվեցին – ուսումնական գծով դեկանի տեղակալ Լ. Այվազյանը զեկուցեց, որ պատրաստ են բոլոր քննական գրաֆիկները։

Որոշեցին – Աշխատանքները համարել բավարար։

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ՀԱԿՈԲՅԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ Հ. 14

2020թ. հուլիսի 3-ին տեղի ունեցավ գեղարվեստական կրթության ֆակուլտետի խորհրդի նիստը (առցանց)

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. 2019-2020 ուստարվա 2-րդ կիսամյակի քննաշրջանի արդյունքների ամփոփում
2. 2019-2020 ուստարվա ամբիոնների կիսամյակային միջոցառումների հաշվետվություններ
3. ընթացիկ հարցեր

Նիստին ներկա էին խորհրդի 20 անդամից 15-ը

1. Լսեցին – 2019-2020 ուստարվա 2-րդ կիսամյակի քննաշրջանի արդյունքների ամփոփման հարցը։

Արտահայտվեցին – ուսումնական գծով դեկանի տեղակալ Լ. Այվազյանը ներկայացրեց 2019-2020 ուստարվա 2-րդ կիսամյակի քննաշրջանի արդյունքները.

բակալավրիատ 1-3-րդ կուրսեր (առկա)	**ընդհանուր**	**քննությունները հանձնած**	**անբավարար**
	319 ուս.	249	70
1-2-րդ կուրսեր (հեռակա)	77 ուս.	49	28

մագիստրատուրա 1-ին կուրս	**ընդհանուր**	**քննությունները հանձնած**	**անբավարար**
	17 ուս.	15	2

Որոշեցին – քննաշրջանի արդյունքները համարել բավարար։

2. Լսեցին – 2019-2020 ուստարվա ամբիոնների կիսամյակային միջոցառումների հաշվետվություններ

Արտահայտվեցին – արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնի վարիչ Ս.Մելիքյանը, երաժշտության կրթության ամբիոնի վարիչի պ/կ Ս.Էլբակյանը։ Ս.Մելիքյանը իր ելույթում նշեց, որ չնայած ներկա պայմաններին ամբիոնի ուժերով հրատարակվել է մագիստրոսական հոդվածների հերթական (երրորդ պրակը), ներկայացրեց նաև այն փաստը, որ դասախոսները աշխատում են հոդվածների և ձեռնարկների ստեղծման վրա։ Ս.Էլբակյանը ներկայացրեց 1-ին կիսամյակում կատարված աշխատանքների արդյունքները։

Որոշեցին – արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնի և երաժշտության կրթության ամբիոնի աշխատանքները համարել բավարար։

ընթացիկ հարցեր

3. ԼՍԵՑԻՆ – Արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնի դասախոս մանկ. գիտ. թեկնածու Լիլիթ Իսկոյանի «Ուսանողների ստեղծագործական կարողությունների զարգացման մեթոդներն ու միջոցները գեղարվեստական կրթության համակարգում» մեթոդական ձեռնարկի տպագրության երաշխավորելու հարցը

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնի վարիչ Ս.Մելիքյանը նշեց, որ ներկայացված ձեռնարկը երկարատև հետազոտական աշխատանքի արդյունք է, իսկ հրատարակումը օգտակար կլինի մասնագետներին, ուսանողությանը և արվեստասեր հասարակությանը։ Ա.Բաղդասարյանը ներկայացրեց մրցութային հանձնաժողովի դրական կարծիքը։

Լիլիթ Իսկոյանը ներկայացրել է անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը՝ երկու դրական կարծիք, ամբիոնի նիստի քաղվածք (19.07.2020 հ.17 նիստի արձանագրությունից)

ՈՐՈՇԵՑԻՆ – Երաշխավորել հրատարակության արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնի դասախոս Լիլիթ Իսկոյանի «Ուսանողների ստեղծագործական կարողությունների զարգացման մեթոդներն ու միջոցները գեղարվեստական կրթության համակարգում» մեթոդական ձեռնարկը։

Բաց քվեարկության արդյունքում

Կողմ-15

Դեմ- 0

Ձեռնպահ - 0

4.ԼՍԵՑԻՆ – Կերպարվեստի ամբիոնի հայցորդ Տարոն Ալեքսանյանի <<Մասնագիտական բուհերում գրաֆիկական դիզայնի արդյունավետ դասավանդման համակարգված մոդելների առանձնահատկությունները>> խորագրով ատենախոսության թեման և ատենախոսության ղեկավար հաստատելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – կերպարվեստի ամբիոնի պրոֆեսոր Լ.Ներսիսյանը, պրոֆեսոր Ա.Եղիազարյանը: Ելույթ ունեցողները նշեցին, որ թեման արդիական է և ժամանակահունչ, այն անհրաժեշտ է դասավանդման պրոցեսում: Խորհրդի նախագահ Ա.Հակոբյանը ներկայացրեց ատենախոսի ղեկավարին՝ մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Անուշ Եղիազարյանին:

ՈՐՈՇԵՑԻՆ – Դիմել Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գիտական խորհրդին հաստատելու Կերպարվեստի ամբիոնի հայցորդ Տարոն Ալեքսանյանի <<Մասնագիտական բուհերում գրաֆիկական դիզայնի արդյունավետ դասավանդման համակարգված մոդելների առանձնահատկությունները>> խորագրով ատենախոսության թեման, ԺԳ.00.02 (դասավանդման և դաստիարակության մեթոդիկա, կերպարվեստ մասնագիտությամբ), ատենախոսության ղեկավար հաստատել մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Անուշ Եղիազարյանին:

5.ԼՍԵՑԻՆ – Կերպարվեստի ամբիոնի հայցորդ Գագիկ Ավետիսյանի <<Սովորողների գեղարվեստական ընկալունակության ձևավորումը պատմամշակութային կոթողների պատկերագրման գործընթացում>> խորագրով ատենախոսության թեման և ատենախոսության ղեկավար հաստատելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Յուրի Յուզբաշյանը, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լեմս Ներսիսյանը: Ելույթ ունեցողները նշեցին, որ թեման արդիական է և ժամանակահունչ գեղարվեստական կրթության մակարդակի բարձրացման համար: Խորհրդի նախագահ Ա.Հակոբյանը ներկայացրեց ատենախոսի ղեկավարին՝ մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լեմս Ներսիսյանին:

ՈՐՈՇԵՑԻՆ – Դիմել Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գիտական խորհրդին հաստատելու Կերպարվեստի ամբիոնի հայցորդ Գագիկ Ավետիսյանի <<Սովորողների գեղարվեստական ընկալունակության ձևավորումը պատմամշակութային կոթողների պատկերագրման գործընթացում>> խորագրով ատենախոսության թեման, ԺԳ.00.02 (դասավանդման և դաստիարակության մեթոդիկա, կերպարվեստ մասնագիտությամբ), ատենախոսության ղեկավար հաստատել մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լեմս Ներսիսյանին:

6.ԼՍԵՑԻՆ – Կերպարվեստի ամբիոնի հայցորդ Միհրդադ Մոմենիի <<Արվեստի միջէթնիկական փոխազդեցության իրազեկության սոցիալ-մանկավարժական պայմանները ԲՈՒՀ-ում (Նոր Ջուղայի հայ նկարիչների օրինակով)>> խորագրով ատենախոսության թեման և ատենախոսության ղեկավար հաստատելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Արվեստի պատության, տեսության և մշակութաբանության ամբիոնի վարիչ Ս.Մելիքյանը, պրոֆեսոր Լեմս Ներսիսյանը: Ս.Մելիքյանը նշեց, որ Մ.Մոմենին եղել է ամբիոնի հայցորդ, սակայն ամբիոնը դեմ չի իր կերպարվեստի ամբիոն տեղափոխությանը: Լ.Ներսիսյանը նշեց, որ թեման հետաքրքիր է և անհրաժեշտ: Խորհրդի նախագահ Ա.Հակոբյանը ներկայացրեց ատենախոսի ղեկավարին՝ մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լեմս Ներսիսյանին:

ՈՐՈՇԵՑԻՆ – Դիմել Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գիտական խորհրդին հաստատելու Կերպարվեստի ամբիոնի հայցորդ Միհրդադ Մոմենիի <<Արվեստի միջէթնիկական փոխազդեցության իրազեկության սոցիալ-մանկավարժական պայմանները ԲՈՒՀ-ում (Նոր Ջուղայի հայ նկարիչների օրինակով)>> խորագրով ատենախոսության թեման, ԺԳ.00.02 (դասավանդման և դաստիարակության մեթոդիկա, կերպարվեստ մասնագիտությամբ), ատենախոսության ղեկավար հաստատել մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լեմս Ներսիսյանին:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ՀԱԿՈԲՅԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ